ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

23.12.2020թ N ԼՔ/06.3/28546-2020
Ձեր N

«ԷՄ ԴԻ ԷՅ ԹՐԵՅԴ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ՏՆՕՐԵՆ ՊԱՐՈՆ ԷԴՈՒԱՐԴ ՓՈԹՈՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Փոթոյան,

Առողջապահության նախարարության և «ԷՄ ԴԻ ԷՅ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ի միջև 27.10.2020թ. կնքված թիվ «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2020/29-2» պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) համաձայն՝ վերջինս պարտավոր էր առողջապահության նախարարությանը մինչև 16.11.2020թ. մատակարարել 50 հատ «Բերակտանտ» անվանմամբ դեղը, ընդհանուր 8,572,000 (ութ միլիոն հինգ հարյուր յոթանասուներկու հազար) ՀՀ դրամ ընդհանուր գումարով:

Հաշվի առնելով վերոգրյալ նախատեսված քանակի ապրանքների չմատակարարման փաստը և հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետը՝ առողջապահության նախարարությունը 23.12.2020թ.-ին միակողմանի լուծում է Պայմանագիրը:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ համաձայն Պայմանագրի 6.2 կետի «ԷՄ ԴԻ ԷՅ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին փոխանցել 158,582 (հարյուր

հիսունութ հազար հինգ հարյուր ութսուներկու) ՀՀ դրամ՝ որպես Պայմանագրով նախատեսված տույժ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ ԼՈՒՍԻՆԵ ՔՈՉԱՐՅԱՆ

Recoverable Signature

X

ԼՈՒՍԻՆԵ ՔՈՉԱՐՅԱՆ

Signed by: KOCHARYAN LUSINE 6509770407

Կատարող՝ Հասմիկ Սարգսյան,
Ֆինանսատնտեսագիտական վարչություն,
հեռ. 060 80 80 03 (1804)